

Հաստատված է
«Էկոլոգիական իրավունք»
հասարակական կազմակերպության
հիմնադիր ժողովի կողմից

12-ը դեկտեմբերի 2012թ.

Գրանցված է
ՀՀ իրավաբանական անձանց
պետական ռեգիստրի
կենտրոնական մարմնի կողմից
«28» ----- 12----- 2012թ.
Գրանցման համար 211.171.747554
Վկայական ----- 03 Ն 297554
Հարկ վճարողի հաշվառման
Համար ----- 00881036-----


ՀԿ նախագահ

Արթուր Գրիգորյան



ՀՀ պետական ռեգիստրի
ղեկավար

Արմեն Գևորգյան



«ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ»
Հ Ա Ս Ա Ր Ա Կ Ա Կ Ա Ն Կ Ա Ձ Մ Ա Կ Ե Ր Պ ՈՒ Թ Յ Ա Ն
Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2012թ.

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. «Էկոլոգիական իրավունք» հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող եւ ստացված շահույթը մասնակիցների միջև չբաշխող ոչ առևտրային հասարակական միավորում է: Կազմակերպությունում, իրենց շահերի ընդհանրության հիման վրա միավորվել են ֆիզիկական անձիք Էկոլոգիայի եւ այդ ոլորտին առնչվող այլ հիմնախնդիրների (սոցիալ-տնտեսական, առողջապահական, արդարադատության) վերաբերյալ իրենց եւ այլոց իրավունքներն ու շահերը պաշտպանելու, հանրագուտ այլ գործունեություն իրականացնելու նպատակներով:

1.2. Կազմակերպությունը գործում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, օրենքների, այլ նորմատիվ իրավական ակտերի, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի եւ սույն կանոնադրության հիման վրա:

1.3. Կազմակերպությունը գործում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում եւ օտարերկրյա պետություններում՝ այդ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

1.4. Կազմակերպությունը գործում է օրինականության, կամավորության, թափանցիկության, հրապարակայնության և ինքնակառավարման սկզբունքներով:

1.5 Կազմակերպության անդամները Կազմակերպությանը որպես սեփականություն հանձնած գույքի՝ ներառյալ անդամավճարների նկատմամբ իրավունքներ չունեն: Նրանք պատասխանատու չեն Կազմակերպության պարտավորությունների, իսկ Կազմակերպությունը՝ իր անդամների պարտավորությունների համար:

1.6 Կազմակերպությունը կարող է ունենալ առանձնացված ստորաբաժանումներ և հիմնարկներ:

1.7. Կազմակերպությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, հաշվարկային հաշիվ և այլ հաշիվներ բանկերում՝ ՀՀ դրամով և օտարերկրյա արժույթներով, հայերեն և անգլերեն լեզուներով կլոր կնիք՝ իր խորհրդանիշով:

1.8. Կազմակերպության հայերեն լրիվ անվանումն է՝

«Էկոլոգիական իրավունք» հասարակական կազմակերպություն

Կազմակերպության հայերեն կրճատ անվանումն է՝

«Էկոիրավունք» ՀԿ

Կազմակերպության ռուսերեն լրիվ անվանումն է՝

“Экологическое право” общественная организация

Կազմակերպության ռուսերեն կրճատ անվանումն է՝

”Экоправо” ОО

Կազմակերպության անգլերեն լրիվ անվանումն է՝

“Ecological Right” non - governmental organization

Կազմակերպության անգլերեն կրճատ անվանումն է

“EcoRight” NGO

1.9. Կազմակերպության խորհրդանիշն իրենից ներկայացնում է դեղնականաչ գույնի երկու հավասար հորիզոնական հատվածներ, որոնք կազմում են լայնության հատվածում բաց ուղղանկյուն, որը խորհրդանշում է իրավունքի գերակայությունը եւ գրված օրենքի (ստատուտի) միջոցով իրավունքի սահմանափակման անընդունելի լինելը: Ուղղանկյան աջ կողմից դեպքի ուղղանկյան ներս սպիտակ հատված մուգ կանաչ ձիթենու տերև, որպես բնության եւ կյանքի խորհրդանիշ եւ ընդգծում է Կազմակերպության կանոնադրական նպատակներից բխող գործունեության էկոլոգիական ուղղվածությունը: Ուղղանկյան աջ կողմում լայնության բարձրությամբ կազմակերպության անգլերեն կրճատ անվանումն է՝ մեծատառերով՝ ECORIGHT՝ համաձայն սույն Կանոնադրության հավելվածի:

1.10. Կազմակերպության գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, 0022, Ավան-Առինջ 2/13 շենք, բնակարան 30, հեռ. (010)621739:

2. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2.1. Կազմակերպության գործունեության առարկան եւ նպատակներն են՝

ա/ Նպաստել ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված՝ առողջ եւ բարեկեցիկ շրջակա միջավայրում ապրելու հիմնարար իրավունքի իրականացմանը.

բ/ պաշտպանել մարդու՝ առողջ եւ բարեկեցիկ շրջակա միջավայրում ապրելու (Էկոլոգիական) իրավունքները Հայաստանի մասնակցությամբ միջազգային պայմանագրերով ամրագրված մարդու իրավունքների ապահովման շրջանակներում.

գ/ մշակել ամբողջական էկոլոգիական քաղաքականություն՝ հիմնված բնական պաշարների ողջամիտ օգտագործման, կանաչ տնտեսության եւ կայուն զարգացման հիմնարար հայեցակարգերի վրա.

դ/ նպաստել Հայաստանի Հանրապետության էկոլոգիական օրենսդրության եւ դրան առնչվող այլ իրավական ակտերի համապատասխանեցմանը Հայաստանի մասնակցությամբ միջազգային պայմանագրերով, դրանց կից արձանագրություններով սահմանված չափանիշներին.

ե/ հաշվի առնելով Հայաստանի եվրոինտեգրման գործընթացները՝ նպաստել, որպեսզի Հայաստանի իրավական համակարգ ներմուծվեն Եվրոմիության դիրեկտիվներով ամրագրված էկոլոգիական բարձր չափանիշներ.

զ/ հասարակական վերահսկողություն իրականացնել շրջակա միջավայրին վնաս պատճառող տնտեսական գործունեությամբ զբաղվող ընկերությունների գործողությունների օրինականության նկատմամբ.

է/ ուսումնասիրել շրջակա միջավայրի վիճակով պայմանավորված՝ բնակչության առողջական հիմնահարցերը: Այդ խնդրի լուծման համար խթանել շրջակա միջավայրի աղտոտման հետեւանքով հիվանդությունների կանխարգելման համար օրենսդրական եւ այլ իրավական, վարչարարական գործընթացներ նախաձեռնելուն եւ նպաստել մարդկանց առողջությանը պատճառված վնասի երաշխավորված փոխհատուցումն ապահովելու համար.

ը/ կազմակերպել եւ իրականացնել էկոլոգիական կրթությանը նպաստող սեմինարներ, դասընթացներ եւ այլ միջոցառումներ.

թ/ դատական պաշտպանության եւ օրենքով չարգելված բոլոր այլ միջոցներով իրականացնել բնության եւ շրջակա միջավայրի պահպանությանը, օրենքի եւ իրավունքի գերակայության կենսագործմանն ուղղված գործունեություն:

2.2. Կազմակերպության խնդիրներն են՝

ա) էկոլոգիական օրենսդրությունը միջազգային եւ եվրոմիության բարձր չափանիշներին համապատասխանեցնելու նպատակով նախաձեռնել եւ իրականացնել Հայաստանում օրենսդրական բարեփոխումներին ուղղված միջոցառումներ,

բ) խթանել բնության հատուկ պահպանվող տարածքների ստեղծման, դրանց առնչվող իրավական կարգավորումների հստակեցման գործընթացները՝ միջազգային իրավունքի բարձր չափանիշներին համապատասխան.

գ) միջոցներ ձեռնարկել, որպեսզի Հայաստանի այն հողատարածքները, որտեղ կան Հայաստանի կամ միջազգային Կարմիր գրքում գրանցված կենդանական կամ բուսական աշխարհի ներկայացուցիչներ, պատմամշակութային եւ օրենքով նախատեսված եւ պահպանման ենթակա այլ օբյեկտներ (ՀՀ Հողային օրենսգրքով սահմանված բնապահպանական, առողջարանական, հանգստի, պատմական եւ մշակութային նշանակության գոտիներ եւ այլն) ընդգրկվեն հատուկ պահպանվող տարածքների հոդերի կազմում,

դ) միջոցներ ձեռնարկել Հայաստանի հատուկ պահպանվող տարածքների իրավական ռեժիմը Հայաստանի միջազգային պայմանագրերով եւ Եվրոմիության Էկոլոգիական օրենսդրությանը համապատասխան ստանդարտներով պահպանելու, այդ տարածքների իրավական ռեժիմի հետ անհամատեղելի գործունեության տեսակները կանխարգելելու համար,

ե) առողջ եւ բարեկեցիկ շրջակա միջավայրում ապրելու իրավունքի կենսագործումն ապահովելու նպատակով միջոցներ ձեռնարկել բնությունը եւ շրջակա միջավայրը աղտոտող տնտեսական գործունեությունը Եվրոմիության Էկոլոգիական ստանդարտներին համապատասխանեցնելու համար,

զ) լեռնահանքային արդյունաբերության կամ այլ տնտեսական գործունեության հետեւանքով աղտոտված տարածքներում նպաստել մարդկանց առողջական վիճակի վերաբերյալ համապարփակ ուսումնասիրությունների իրականացմանը: Օրենսդրական փոփոխություններ, վարչարարության միջոցներ եւ օրենքով չարգելված այլ միջոցներով նախաձեռնել վնասակար ազդեցության ենթարկված համայնքների բնակչության առողջության ապահովագրման, պատճառված առողջակա եւ տնտեսական վնասի փոխհատուցման մեխանիզմների մշակման եւ արդյունավետ իրականացման համար,

է) օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանել այն անձանց, ում կյանքին, առողջությանը կամ սեփականությանը վնաս է պատճառվել շրջակա միջավայրի աղտոտման հետեւանքով,

ը) Հայաստանում կազմակերպել Էկոկրթական միջոցառումներ,

թ) իրականացնել օրենքով չարգելված եւ սույն կանոնադրության նպատակներից ու խնդիրներից բխող այլ գործունեություն:

2.3. Իր նպատակներն ու խնդիրներն իրականացնելու համար կազմակերպությունը սահմանված կարգով համագործակցում է Հայաստանի Հանրապետության եւ պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, Հայաստանում,

Արցախում եւ սփյուռքում գործող հասարակական, մասնավորապես՝ գործունեության էկոլոգիական ուղղվածություն ունեցող կազմակերպությունների ու անհատների, ինչպես նաեւ միջազգային եւ օտարերկրյա կազմակերպությունների հետ:

3. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄԱԳՐՎԵԼՈՒ ԵՎ ԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՈՒՐՍ ԳԱԼՈՒ ԿԱՐԳԸ

3.1. Կազմակերպության անդամ կարող է դառնալ Հայաստանի Հանրապետության եւ օտարերկրյա ցանկացած քաղաքացի, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող անձ, ով ցանկանում է մասնակցել Կազմակերպության գործունեությանը եւ ընդունում է Կազմակերպության կանոնադրությունը:

Անձը, որը կազմակերպության հիմնադիր չէ, կազմակերպության անդամ կարող է դառնալ իր կամքի ազատ արտահայտման հիման վրա՝ այդ կազմակերպության կանոնադրությամբ սահմանված կարգով: Մինչեւ տասնչորս տարեկան անչափահասը կազմակերպությանը կարող է անդամագրվել իր ցանկությամբ՝ օրինական ներկայացուցչի դիմումի հիման վրա: Տասնչորսից մինչև տասնութ տարեկան անչափահասը, եթե օրենքով սահմանված կարգով լրիվ գործունակ չի ճանաչված, կազմակերպությանը կարող է անդամագրվել իր դիմումի հիման վրա՝ օրինական ներկայացուցչի գրավոր համաձայնությամբ:

3.2. Կազմակերպության անդամ դառնալու ցանկություն ունեցող անձը գրավոր դիմում է Կազմակերպության խորհրդին (այսուհետ՝ Խորհուրդ):

3.3. Կազմակերպության անդամության մեջ ընդունելու հարցը լուծում է Խորհուրդը՝ Խորհրդի կողմից սահմանված կարգով:

3.4. Կազմակերպությանն անդամագրված անձն ազատ է դուրս գալու Կազմակերպությունից: Կազմակերպության անդամությունից զրկումը տեղի է ունենում Խորհրդի որոշմամբ:

3.5. Խորհրդը կարող է որոշում կայացնել Կազմակերպության անդամին անդամությունից զրկելու մասին, եթե Կազմակերպության անդամը չի վճարում Խորհրդի կողմից սահմանված անդամավճարները կամ իր գործունեությամբ եւ պահվածքով արատավորում է Կազմակերպության հեղինակությունն ու բարի համբավը:

4. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1. Կազմակերպության անդամն իրավունք ունի՝

ա/ ընտրել Կազմակերպության բարձրագույն մարմնի (Խորհրդի) անդամներին եւ ընտրվել դրանցում,
բ/ Կազմակերպության ղեկավար մարմիններին ներկայացնել առաջարկություններ, դիմումներ եւ բողոքներ,
գ/ ամբողջական տեղեկատվություն ստանալ Կազմակերպության գործունեության մասին,
դ/ ազատորեն դուրս գալ Կազմակերպությունից,
ե/ Կազմակերպությունից ստանալ օգնություն՝ ուղղված սույն կանոնադրության նպատակներից եւ խնդիրներից բխող՝ իր օրինական շահերի պաշտպանությանը,
զ/ մասնակցել Կազմակերպության կողմից կազմակերպված միջոցառումներին,
է/ Կազմակերպության Խորհրդի եւ Կազմակերպության Նախագահի ոչ կանոնադրական գործունեության դեմ օրենսդրությամբ սահմանված կարգով բողոք ներկայացնել Կազմակերպության Ժողովին, իսկ վերջինիս կողմից արդարացի լուծում չտալու դեպքում՝ դիմել դատարան,
ը/ Կազմակերպության աշխատանքներին մասնակցել հեռահաղորդակցության հասանելի միջոցներով:

4.2. Կազմակերպության անդամը պարտավոր է՝

ա/ բարձր պահել Կազմակերպության հեղինակությունը,
բ/ կատարել Կազմակերպության կանոնադրության պահանջները, ղեկավար մարմինների որոշումները,
գ/ մուծել անդամավճար, որոնց չափն ու վճարման կարգը սահմանում է Խորհուրդը,
դ/ բարեխղճորեն կատարել իր վրա դրված պարտականությունները:

4.3. Կազմակերպության կանոնադրությունը խախտող կամ իր պարտականությունները չկատարող անդամի նկատմամբ Կազմակերպության Խորհրդի կողմից կարող են կիրառվել կարգապահական տույժի միջոցներ՝ նկատողություն, խիստ նկատողություն, Կազմակերպության անդամությունից զրկում:

5. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

5.1. Կազմակերպությունն իրավաբանական անձ է պետական գրանցման պահից:

5.2. Կազմակերպությունն ունի առանձնացված գույք, ինքնուրույն հաշվեկշիռ, իր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն անվանումով կնիք, դրոշմ, հաշվարկային հաշիվ բանկում՝ Հայաստանի Հանրապետության եւ օտարերկրյա արժույթով, իր անունից կարող է ձեռք բերել գույքային եւ ոչ գույքային իրավունքներ եւ կրել պարտականություններ, որպես հայցվոր եւ պատասխանող հանդես գալ դատարանում:

5.3. Կազմակերպությունն իր կանոնադրությամբ նախատեսված նպատակները եւ խնդիրներն իրականացնելու համար, օրենքով սահմանված կարգով իրավունք ունի՝ ա/ տեղեկատվություն տարածել իր գործունեության մասին,

բ/ ներկայացնել եւ պաշտպանել իր անդամների իրավունքները եւ օրինական շահերն այլ կազմակերպություններում, դատարանում, պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմիններում,

գ/ Դատական կարգով եւ օրենքով չարգելված բոլոր այլ միջոցներով պաշտպանել Կազմակերպության կանոնադրական նպատակներից եւ խնդիրներից բխող հանրային շահերը:

զ/ իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն՝ իր կողմից հիմնադրված տնտեսական ընկերությունների միջոցով, ստեղծել հիմնադրամներ, առանձնացված ստորաբաժանումներ, մասնաճյուղեր եւ ներկայացուցչություններ,

է/ օրենսդրությամբ սահմանված կարգով ձեռք բերել, վարձակալել եւ օգտագործել անշարժ գույք, տրանսպորտային միջոցներ, օրենքով չարգելված այլ գույք,

ը/ օտարել կամ վարձակալության կամ անվճար օգտագործման հանձնել Կազմակերպությանը պատկանող ցանկացած անշարժ եւ շարժական գույք,

թ/ կնքել օրենսդրությամբ չարգելված պայմանագրեր եւ այլ գործարքներ,

ժ/ ինքնուրույն կազմավորել եւ տնօրինել իր ֆինանսական ռեսուրսները, այդ թվում՝ փոխառու միջոցների ներգրավմամբ, Հայաստանի Հանրապետությունում եւ այլ պետություններում ստանալ վարկեր, դրամաշնորհներ, այդ թվում՝ արտարժույթով,

ի/ իրականացնել միջազգային գործունեություն, այդ թվում՝ գործուղել տարբեր երկրներ, հրավիրել այլ պետություններից քաղաքացիներ, ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ օտարերկրյա պետություններում՝ այդ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

6. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կազմակերպությունը պարտավոր է՝

ա/ ցանկացած ֆիզիկական անձի պահանջով 7 օրացուցային օրվա ընթացքում նրան հնարավորություն տալ ծանոթանալու Կազմակերպության կանոնադրությանը,

բ/ օրենքով սահմանված կարգով վարել գործավարություն եւ հաշվապահական հաշվառում,

գ/ իր գործունեության եւ գույքի օգտագործման հաշվետվությունները ներկայացնել Կազմակերպության Ժողովի հաստատմանը ոչ պակաս, քան երկու տարին մեկ անգամ՝ ապահովելով այդ հաշվետվությունների հրապարակայնորեն մատչելի լինելը,

դ/ պետական կառավարման լիազորված մարմնի պահանջով նրան տրամադրել իր բարձրագույն մարմնի որոշումների պատճենները, Կազմակերպության գործունեության մասին այլ փաստաթղթեր, թույլատրել այդ մարմինների ներկայացուցիչներին ներկա գտնվել Կազմակերպության Ժողովին,

ե/ օրենքով նախատեսված դեպքերում եւ կարգով տեղեկատվություն ու հաշվետվություններ ներկայացնել պետական մարմիններին,

զ/ առանձնացված ստորաբաժանում կամ հիմնարկ ստեղծելու եւ լուծարելու մասին որոշումներ ընդունելուց հետո՝ մեկամսյա ժամկետում դիմել պետական գրանցման մարմին՝ սահմանված կարգով դրանք հաշվառելու եւ հաշվառումից հանելու համար,

է/ վարել իր անդամների հաշվառումը,

ը/ առանց լիազորագրի Կազմակերպությունը ներկայացնելու իրավունք ունեցող պաշտոնատար անձի եւ (կամ) Կազմակերպության գտնվելու վայրի հասցեի փոփոխման դեպքում, օրենքով սահմանված ժամկետներում պետական գրանցման մարմին ուղարկել այդ անձի անձնագրային տվյալները եւ (կամ) Կազմակերպության գտնվելու վայրի հասցեի մասին տվյալները,

թ/ Կազմակերպության անդամներին տրամադրել սպառիչ տեղեկատվություն Կազմակերպության գործունեության վերաբերյալ:

7. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

7.1. Կազմակերպության գործունեության եւ կառավարման ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունքը պատկանում է Կազմակերպության բարձրագույն մարմնին՝ Ժողովին:

7.2. Ժողովը հրավիրվում է երկու տարին մեկ անգամ: Ժողովը հրավիրում, դրա անցկացման կարգն ու ժամկետները որոշում է Խորհուրդը: Եթե Կազմակերպության անդամների թվաքանակն անցնում է հարյուրից, ապա Խորհրդի կողմից սահմանված կարգով Ժողովին կարող են մասնակցել անդամների կողմից ընտրված ներկայացուցչական պատվիրակները:

7.3. Կազմակերպության արտահերթ ժողով հրավիրվում է Կազմակերպության Խորհրդի կողմից՝ Կազմակերպության անդամների մեկ երրորդի կամ Կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովի (վերստուգողի) պահանջով՝ պահանջող կողմի հաստատած օրակարգով, որի մասին Կազմակերպության անդամները տեղեկացվում են ոչ ուշ, քան 14 օրացուցային օրվա ընթացքում: Ժողովի օրակարգի, անցկացման տեղի, օրվա ու ժամի մասին մասնակիցները ծանուցվելու են Խորհրդի կողմից՝ ժողովից առնվազն 5 օրացուցային օր առաջ:

7.4. Ժողովի բացառիկ իրավասության հարցերն են՝

ա/ Կազմակերպության կանոնադրության ընդունումը եւ փոփոխումը.

բ/ Կազմակերպության ղեկավար եւ վերահսկողություն իրականացնող մարմինների ընտրությունը, փոփոխումը եւ հետկանչը.

գ/ Կազմակերպության լուծարման եւ վերակազմակերպման մասին որոշումների ընդունումը.

դ/ Կազմակերպության գործունեության եւ գույքի օգտագործման հաշվետվությունների հաստատումը:

7.5. Ժողովը կարող է հարցեր քննարկել եւ որոշումներ ընդունել, եթե դրան մասնակցում է Կազմակերպության բոլոր անդամների կամ ընտրված բոլոր պատվիրակների կեսից ավելին: Հարցերի քննարկման ժամանակ որոշումներն ընդունվում են Կազմակերպության բոլոր անդամների կամ ընտրված բոլոր պատվիրակների ձայների պարզ մեծամասնությամբ: Կանոնադրության

փոփոխությունները եւ լրացումները կատարվում են Կազմակերպության բոլոր անդամների կամ ընտրված բոլոր պատվիրակների ձայների որակյալ մեծամասնությամբ (2/3-ով):

7.6. Կազմակերպության Խորհուրդն ընտրվում է Ժողովի կողմից՝ երկու տարի ժամկետով:

7.7. Խորհուրդն իր աշխատանքներն իրականացնում է նիստերի ձևով, որոնք հրավիրվում են Կազմակերպության Նախագահի կողմից՝ ոչ ուշ, քան վեց ամիսը մեկ անգամ: Խորհրդի նիստ կարող է հրավիրվել նաեւ Կազմակերպության անդամների 20%-ի կամ Խորհրդի երկու անդամի պահանջով: Խորհրդի նիստերը կարող են գումարվել նաեւ էլեկտրոնային հաղորդակցության միջոցով:

7.8. Խորհուրդը՝

ա/ ընտրում է Կազմակերպության Նախագահ, բացառությամբ կազմակերպության առաջին նախագահի, որին ընտրում է հիմնադիր ժողովը,

բ/ հաստատում է Կազմակերպության Նախագահի հաշվետվությունները, այդ թվում՝ Ժողովին ներկայացվող հաշվետվությունը,

գ/ առաջարկություններ է ներկայացնում Ժողովին՝ նրա բացառիկ իրավասությանը վերաբերող հարցերի մասին,

դ/ ընդունում է Կազմակերպության անդամ եւ ազատում կամ զրկում անդամությունից,

ե/ ղեկավարում է Կազմակերպության գործունեությունը՝ ժողովների միջև ընկած ժամանակաշրջանում,

զ/ սահմանում է Կազմակերպության անդամների կողմից անդամավճարի մուծման կարգը եւ ձևերը,

է/ ստեղծում եւ լուծարում է Կազմակերպության հիմնարկները, կառուցվածքային ստորաբաժանումները, առանձնացված ստորաբաժանումները /մասնաճյուղեր, ներկայացուցչություններ/, տնտեսական ընկերությունները, ինչպես նաեւ հաստատում է նրանց կանոնադրությունները,

ը/ իրավունք ունի քննարկելու և լուծելու Կազմակերպության գործունեությանն ու կառավարմանն առնչվող ցանկացած հարց, բացառությամբ Ժողովի բացառիկ իրավասությանը վերապահվածներից, այդ թվում՝ նաև Կազմակերպության անդամակցության հարցը ոչ առևտրային իրավաբանական անձանց միություններին եւ միջազգային հասարակական կազմակերպություններին,

թ/ սահմանում է Կազմակերպության պարզեւատրման կարգերը:

7.9. Խորհուրդը կարող է հարցեր քննարկել եւ որոշումներ կայացնել, եթե նրան մասնակցում է իր անդամների կեսից ավելին: Խորհրդի որոշումներն ընդունվում են ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում Կազմակերպության Նախագահի ձայնը վճռորոշ է:

7.10. Կազմակերպության Նախագահն ընտրվում է Խորհրդի կողմից՝ Խորհրդի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, 2 տարի ժամկետով:

7.11. Կազմակերպության Նախագահը համակարգում է Խորհրդի աշխատանքները.

- ներկայացնում է Կազմակերպությունն առանց լիազորագրի,
- ընդունում է որոշումներ, տալիս է լիազորագրեր,
- ձեռք է բերում, տիրապետում, օգտագործում, տնօրինում, օտարում եւ դուրս գրում Կազմակերպության բոլոր տեսակի եւ ցանկացած արժողությամբ գույքը,
- հաստատում է Կազմակերպության աշխատակազմի հաստիքացուցակը, աշխատողների վարձատրության կարգն ու չափերը,
- անհրաժեշտության դեպքում, աշխատանքների ծավալից եւ իր ծանրաբեռնվածությունից ելնելով, կարող է նշանակել գործադիր տնօրեն, որի հետ կնքում է աշխատանքային պայմանագիր եւ նրան տալիս, սույն կանոնադրությամբ սահմանված լիազորություններից բացի, լրացուցիչ լիազորություններ:

7.12. Կազմակերպության գործադիր տնօրենը կարող է նշանակվել երկու տարի ժամկետով:

7.13. Կազմակերպության գործադիր տնօրենը՝

- սույն կանոնադրությամբ եւ աշխատանքային պայմանագրով իրեն տրված լիազորությունների սահմաններում կազմակերպում եւ իրականացնում է կազմակերպության գործունեությունը,
- օրենքով սահմանված կարգով կնքում է գործարքներ, ստորագրում պայմանագրեր, ֆինանսական փաստաթղթեր, բացում բանկային հաշիվներ,
- համակարգող նախագահի հաստատմանն է ներկայացնում աշխատակազմի հաստիքացուցակը, աշխատողների վարձատրության կարգն ու չափերը,
- իր լիազորությունների սահմաններում ընդունում է որոշումներ, հաստիքային եւ պայմանագրային աշխատողներին տալիս հանձնարարականներ,
- իր գործունեության մասին տարեկան հաշվետվություն է ներկայացնում խորհրդին, խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցում է խորհրդի նիստերին:

7.14. Գործադիր տնօրենի հաստիքի բացակայության դեպքում կամ մինչև տնօրեն նշանակելը, կամ տնօրենին պաշտոնից ազատելուց հետո, կամ նրա երկարատեւ բացակայության դեպքում, սույն կանոնադրությամբ նրան վերապահված բոլոր լիազորություններն իրականացնում է Կազմակերպության Նախագահը կամ նրա կողմից պայմանագրային հիմունքներով ժամանակավոր նշանակված անձը:

7.15. Կազմակերպությունը կարող է ունենալ նաեւ հանձնաժողովներ, որոնց գործունեության ուղղությունները եւ կազմերը պետք է ընտրվեն Խորհրդի կողմից:

8. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ, ԳՈՅԱՑՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ԵՎ
ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ

8.1. Կազմակերպության գույքը հանդիսանում է Կազմակերպության սեփականությունը:

8.2. Կազմակերպությունը որպես սեփականություն կարող է ունենալ անշարժ եւ շարժական գույք՝ շենքեր, շինություններ, տրանսպորտային միջոցներ, սարքավորումներ, դրամական միջոցներ, արժեթղթեր եւ օրենքով չարգելված այլ գույք: Կազմակերպության անդամը նրա սեփականության նկատմամբ բաժնային իրավունք չունի:

8.3. Կազմակերպության սեփականության գոյացման աղբյուրներ կարող են լինել՝

- Կազմակերպության անդամների մուտքի վճարները, անդամավճարները,
- դրամական եւ նյութական ներդրումները,
- բանկային հիմնարկներից ստացված վարկերը,
- դրամաշնորհները,
- բարեգործական ներդրումները, ֆիզիկական անձանց եւ կազմակերպությունների նվիրատվությունները,
- Կազմակերպության կողմից հիմնադրված տնտեսական ընկերությունների փոխանցած գումարները,
- Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ մուտքերը:

8.4. Կազմակերպության սեփականությունը կարող է բռնագանձվել միայն դատարանի կողմից՝ օրենքով սահմանված կարգով:

8.5. Կազմակերպության միջոցները կարող են օգտագործվել միայն կազմակերպչական ծախսերի եւ կանոնադրությամբ սահմանված նպատակների եւ խնդիրների իրականացման համար:

8.1 ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆ

8.1.1. Կազմակերպության գործունեության նկատմամբ վերահսկողություն իրականացնում է Կազմակերպության Ժողովը:

8.1.2. Կազմակերպությունն իր ֆինանսական հաշվետվությունների ստուգման նպատակով կարող է պատվիրել արտաքին աուդիտ:

9.ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ԼՈՒԾԱՐՈՒՄԸ, ԼՈՒԾԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԳՈՒՅՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

9.1. Կազմակերպությունը կարող է լուծարվել Ժողովի կամ դատարանի որոշմամբ:

9.2. Ժողովը կազմավորում է լուծարային հանձնաժողով եւ օրենքով նախատեսված կարգով սահմանում լուծարման կարգն ու ժամկետները: Կազմակերպության

լուծարման ավարտին լուծարային հանձնաժողովը, պարտադիր վճարումներն իրականացնելուց հետո մնացած գույքը, Ժողովի որոշմամբ սահմանված կարգով, օգտագործում է Կազմակերպության կանոնադրական նպատակների և խնդիրների իրականացման համար, իսկ, եթե դա հնարավոր չէ, փոխանցում է պետական բյուջե:

9.3. Կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել Ժողովի որոշմամբ կամ օրենքով սահմանված դեպքերում դատարանի որոշմամբ՝ օրենքով սահմանված կարգով:

Հավելված

